

ՍԲ.ՍԱՐԳԻՍ ԵՎ ՍԲ.ԳԵՎՈՐԳ  
ԶՈՐԱՎԱՐՆԵՐ

# ՍՈՒՐԲ ՍԱՄԳԻՒ ԵՎ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻ ՎԱՐՔԸ



ՄԵՅՐՈՒԺԱՆ ԲԱՐԱՁԱՅՆԱՅԻՆ

ԵՐԵՎԱՆ 2008

Այս գրքույկը նրանց համար է որոնք այս աշխարհի մեղքերի ճահճից ուզում են իրենց հոգու աչքերը սուրբ Երկինք հառել: Ինչպես Երկնքի անաղարտ լազուրն է արտացոլվում վճիռ ու հանդարտ լճերի միջոցով, այդպես էլ Երկորի վրա Աստծոն սրբությունն է արտացոլվում իր սրբերի ու արդարների ապրած կյանքով:

Մեր ազգի սիրելի սրբերի սուրբ Սարգիս ու սուրբ Գեվորգի զորավարների մասին է այս վկայաբանական գրքույկը, որոնց բարեխտությամբ թող Տերը մեզ էլ արժանացնի իր Երկնային Արքայությանը:

Երուսաղեմի սուրբ Յակոբյանց  
վարժանանի կրոնի նախկին ուսուցիչ

ՄԵՀՐՈՒԺԱՆ Բարաջանյան

Տպագրված է ՍՊԸ  
«ՊՈԼԻ ԹԱՅՑՊ» տպագրանանը.

Տպագրաքանակը 500



## ՎԱՐՔ

### ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶՈՐԱՎՈՐԻ



Քրիստոսի քաջ և  
անհաղթ վկան, որը գե-  
րագույնը հանդիսա-  
ցավ բոլոր թագավոր-  
ներից և իշխաններից,  
որ պարտության մատ-  
նեց աշխարհի իշխա-  
նին՝ սատանային:

Սուրբ Սարգիսը,  
որը կոչվում է նաև  
մար Սարգիս կամ տեր  
Սարգիս, պատմական  
Հայաստանին սահմա-

նակից Կապադովիլիայի Կեսարիա քաղաքից էր  
(որտեղ ձեռնադրվել և օծվել է Հայոց Հայրապետ  
Գրիգոր Լուսավորիչը), և ապրում էր Մեծ Կոնս-  
տանդիանոսի և Տրդատ թագավորի ժամանակաշր-  
ջանում:

Չորրորդ դարում, երբ քրիստոնեական հավատ-  
քը տարածվեց Հռոմեական կայսրության և Հա-  
մայն տիեզերքի մեջ, հետզհետե պայծառացան  
եկեղեցիները: Կապադովիլիացիների աշխարհի մեջ

իբրև լուսապայծառ աստղ ծագեց երանելի սուրբ  
Սարգիսը, որն ամենքին հիացնում էր իր բարե-  
պաշտությամբ ու զորավոր հավատքով:


Հին ժամանակագիրներից մեկը այսպես է վկա-  
յում նրա մասին.

- Սարգիսը շնորհալի մի այր էր և եռում էր  
Աստծո Հոգով ու ինչ որ Աստծուց խնդրում էր,  
Աստված տալիս էր նրան: Նա քրիստոնյա էր և  
Աստծուն սիրում էր իր ամբողջ սրտով: Նա զորա-  
ցած էր Սուրբ Հոգիով և սիրելի էր Աստծուն ու  
ինչ գործ որ ձեռնարկեր, Աստված նրան հաջողու-  
թյուն էր պարզեցում:

- Նա քաջ զորական էր, զինվորական համագ-  
գեստ հագած, հրամանատարի ձեռքի տակ պաշ-  
տոն էր վարում: Իմաստուն էր և հանճարեղ ու  
ճանաչված բոլոր դատավորներին և իշխանավոր-  
ների կողմից:

Շնորհալի վկայողն ավելացնում է.

- Արքունիքի հրամանով նա կարգված էր որ-  
պես զորական՝ Կապադովիլիայում գտնվող թագա-  
վորի մյուս զորքերի հետ: Բարբարոսների դեմ մղ-  
ված ճակատամարտների մեջ գերազանց էր իր  
զինվորականներից: Եվ նրա կատարած քաջագոր-  
ծությունների արձագանքը հասնում է թագավորի  
ականջին:



Սի տեսարան ժամանակակից  
Կալաղովկիայից

Ու այսպես, օրըստօրէ նա ավելի էր առաջադիմում իր սիրագործությունների մեջ։ Դրանից հետո, կոնստանդին թագավորը բազմաթիվ նվերների հետ միասին շնորհեց նաև ստրատելատության (այսինքն՝ զորագարի) պատիվը իր նահանգի համար և հրաման տվեց, որ բոլոր իշխանների ու դատավորների մեջ բարձրագույն տեղ գրավի։ Այսպես որ մերձակա գավառները՝ գավառապետերով նրան ենթարկվեին, լինի քրիստոնյա, թե՛ հեթանոս։ Ոչ մեկը չէր համարձակվում ընդդիմանալ նրա հրամաններին։

Երբ Աստծո այս սքանչելի այրը այսպիսի մեծապատիվ ճոխության և իշխանության հասավ, նա

դրանք չէր օգտագործում նյութական շահի և սնութի փառքի համար, այլ հոգեսոր և աստվածահաճող գործերին էր ծառայեցնում։ Շրջում էր իր իշխանության տակ եղող քաղաքներն ու գյուղերը և նահանգների գանագան գավառներում, մաքրում նրանց կոապաշտությունից։ Արգելում էր կուռքերի առջև զոհերը, որը գեռ տարածված էին շատ տեղերում, և ամենքի առջև բացում էր աստվածդիտության ուղին, որն անձամբ քարոզում էր Սուրբ Հոգու անխափան իմաստությամբ, որովհետեւ քաջահմուտ էր Հին և Նոր կտարաններին, որին կրթվել էր մանկուց։

Ու այսպես՝ շատերին խոսքով էր որսում Քրիստոսի ավետարանի ուռկանի մեջ, ուրիշներին՝ իր անձի բարեպաշտության ու մարդասիրության օրինակով։ Որովհետև հաճախ ողորմություն էր տալիս և իր ինչքերը բաշխում աղքատներին ու կարույալներին։ Ոմանք ընդունում էին ճշմարտությունը և հրաժարվում մոլորությունից սպառնալիքից, որովհետև իր ունեցած իշխանությամբ սպառնում էր արտաքսել երկրից, իսկ նրանք որոնք նախընտրում էին անգիտության խավարը աստվածպաշտության լույսից, արտաքսում էր հեռու երկիր, որպեսզի Քրիստոսին հավատացողներին գայթակղության պատճառ չլինի։

Հիմնահատակ քանդում էր մեջանները, կործանում բագինները և նրանց տեղը շինում Աստծո եկեղեցիներ և սրբերի վկայարաններ: Բազմացնում էր քահանաների և Քրիստոսի պաշտոնյանների դասը, որով մեծապես հրճվում էին աստվածապաշտները, իսկ մեծապես տիրում հեթանոսները և ինքը՝ բանսարկուն: Երանելի այրը նույնպես ուրախանում էր Քրիստոսի փառավորումով և ստանայի կործանումով:

Ու այսպես շատ տարիներ սրբությամբ և արդարությամբ ապրելով մեծ անուն չ շահում և թափափորի կողմից նորանոր պարգևների արժանանում: Եվ Աստված իր հզոր Աջով պաշտանն էր նրան և բոլոր գործերը հաջողությամբ էր ավարտվում:

Սակայն՝ բարու թշնամի բանսարկուն շատ էր նախանձում ու բարկանում, տեսնելով երանելի Սարգսի հաջողությունները: Նա ջանում էր զանազան փորձություններով խափանել նրա հոգեոր արջադիմությունը, սակայն այդ նրան չէր հաջողվում, որքան ժամանակ հավատքի սյունը՝ Կոնստանդիանոս կայսրը ողջ էր:

Սակայն երբ նրան հաջորդեց չարաբարո Հուլիանոսը, որ մականված էր ուրացող և ապստամբ սուրբ հավատքի դեմ, որը դեմի չարության անոթ եղավ, եկեղեցու խաղաղությունն ալեկոծեց, միտք անելով՝

կամ բոլոր Քրիստոսին հավատացողները կռապաշտ դարձնել կամ ամբողջությամբ բնաջնջել:

Այս բանի վրայով շատ ուրախացան մնացած մոլի կռապաշտները, և սկսեցին հալածել հավատացյալներին: Քանդում ու ավերում էին եկեղեցիները և հալածում նրա պաշտոնյաններին: Դարձյալ վերաշինում էին ավերված մեջանները և ստիպում էին բոլորին՝ որպեսզի Հուլիանոսի հրամանով կուռքերին զոհեր մատուցեին: Այդ պատճառով էլ բազմաթիվ քրիստոնյա եկեղեցականներ, զինվորականներ և ռամբիկներ նահատակվեցին զանազան տանջանքներով: Շատերն էլ հայրենի գավառներից փախուստի դիմեցին դեպի օտար երկրներ:

Եվ տեսնելով այս ամենը, քաջ Սարգիսը մտաւանջվում է, թե ի՞նչ է Աստծո կամքը, որպեսզի ըստ այնմ գործի: Եվ ահա Հիսուսը տեսիլքի մեջ երևալով ասաց.

« Ժամանակը հասել է, ո՞վ Սարգիս, որ հեռանաս քո երկրից, ազգիցդ, ինչպես Աբրահամ նահապետը և գնաս այն երկիրը՝ որ քեզ պիտի ցույց տամ: Այնտեղ է, որ պետք է ստանաս քրիստոնեության հաղթական պսակը: »

Եվ մինչ երանելին խորհում էր տեսիլքի նշանակության մասին, այդ ժամանակ լուր տարածվեց, թե Հուլիանոսը մեծ պատրաստություն է

տեսնում դեպի Արևելք՝ պատերազմելու Պարսից թագավորի հետ։ Նա հույսը դրել էր հեթանոս չաստվածների սուս պատղամների վրա, որ իբր Մեծ Ալեքսանդր Սակեդոնացու նման փառքի պետք է տիրանա և տիրապետելու է աշխարհի բոլոր թագավորությունների վրա։

Այդ ժամանակ հասկացավ բարեհաղթ զորավար Սարգիսը, թե այս է տեսիլքի մեջ իրեն ցույց տրաված ժամանակը։ Քանի որ իրեն համար անհնար էր գործակցել Հուլիանոսի հետ, կամ մասնակիցը լինել նրա գործած չարիքներին, որ պետք է կրեին եկեղեցիները Հուլիանոսի արշավանքների ընթացքում, նա պատրաստվեց մեկնելու քրիստոնյաներին սահմանակից մեկ ուրիշ թագավորություն, այսինքն Հայաստան։

Ապա թողնելով Կապադովկիայի մեջ ունեցած իր հայրենի ժառանգությունը, իշխանական ճոխությունները, փառքը, բազմաթիվ զորքերի հրամանատարությունը և առօրյա կյանքի բոլոր վայելքները, ըստ այն պատվերի որ տվել էր Տերը մեծատունին, ու վաճառելով իր ստացվածքները՝ բաշխեց կարոսայներին, և այս ձեռք թեթևանալով երկրագոր նյութերի ծանրություններից, սրանց փոխարեն առնելով Քրիստոսի Խաչը, գնաց իր Փրկչի ետևից։

- 9 -

Իրեն հետ էր նաև որդին, որը մորից որբ էր, և որ հետո իր վարքով ստացավ Սարտիրոս անունը։ Նա պակաս չէր իր հոր առաքինություններից, թե՛ մարմնավոր քաջագործություններով, և թե՛ հոգու առաքինությամբ։

Երկուսն էլ միաբերան աղոթելով, ճշմարտության ճամբան էին խնդրում՝ ասելով.

~ Ամենքի Աստված և ամենայնի Տեր, որից գոյության առան բոլոր արարածները, որ Քո ողորմությամբ առաջին արդարների հետ եղար և նրանց փրկեցիր բազմաթիվ փորձություններից, մենք ևս ահա, Քո սուրբ Անվանդ համար հալածվողներս աղաչում ենք Քեզ, մեզ հետ եղիր մեր բոլոր ճամբորդության մեջ, ինչպես որ արեցիր մեզանից առաջ եղող սրբերիդ, մինչև որ հասցնես Քո երկնավոր Հորդ օթևաններից մեկը. և Քեզ փառք՝ Հորը և Սուրբ Հոգու հետ հավիտյանս հավիտենից. ամեն։

Այնուհետև ճանապարհը շարունակելով՝ ուղևորվեցին Հայաստան և ապաստանեցին Տիրան արքայի մոտ, որը որդին էր Խոսրովի՝ Տրդատի որդու։ Հայոց արքան մեծ պատվասիրությամբ հյուրընկալեց քաջ Սարգսին և մի որոշ ժամանակ իր մոտ պահեց։

Իսկ ուրացող Հուլիանոսը անհամար զինորնե-

- 10 -

բով շարժվեց դեպի Պարսկաստան: Նախ՝ հասնելով  
Անտիոք, չարչարեց այնտեղի քրիստոնյաներին:  
Եվ երբ նրա անգիտության և բռնության համբավը  
տարածվեց շատ տեղեր, սաստիկ վախը պատեց բո-  
լորին, այդ պատճառով էլ շատերը փախչում էին և  
թաքնվում խորը ձորերի և ժայռերի ծերպերի մեջ:

Այս լուրերը հասան նաև Հայաստան և այնտեղ  
էլ սկսեցին վախենալ ամբարիշտի գալուստից:  
Նույնիսկ Տիրան արքան երկյուղեց իր մոտ պահել  
բարեպաշտ Սարգիսին, մտածելով, որ գուցե Հու-  
լիանոսը տեղեկանա, և իրենից պահանջի զորավա-  
րին և հրաժարվելու դեպքում՝ խոռվություն կծա-  
գի հոռոմների և իր երկրի միջև: Ապա խորհուրդ  
է տալիս Սարգսին հեռանալ այստեղից և դիմել  
Պարսից Շապուհ արքային:

Այս ամենը հենց այնպես չէր, որ կատարվում  
էր, այլ Աստվածային նախախնամությամբ, որով-  
հետև դա նրան առաջնորդեց այն վայրը՝ որը տե-  
սել էր տեսիլքի մեջ և որտեղ որ պիտի պսակվեր  
Քրիստոսի անվան համար երանելի նահատակու-  
թյան վկայությամբ:

Սարգիսը մեկնեց Հայաստանից և որդու հետ  
գնաց Պարսկաստան: Լսելով որ Շապուհ արքան  
Տիգրոնից ելել և Խորասան է անցել, ինքն էլ գնաց  
այնտեղ թագավորին դիմավորելու:

Շապուհ թագավորը երբ նրան տեսավ, շատ ու-  
րախացավ, քանզի ուրիշներից տեղեկացել էր նրա  
քաջության մասին: Նրա բերանից ևս լսեց, թե  
Հուլիանոսի հարստահարություններից խուսափե-  
լու համար փախել է Հոռոմների երկրից:

Արքան մեծ պատիկներով ընդունեց նրան և  
գլխավորներից մեկը նշանակեց իր զորքի մեջ:  
Տեղյակ լինելով նրա քաջության և հավատարմու-  
թյան մասին, բազմաթիվ գնդեր դրեց նրա տրա-  
մադրության տակ: Զորավար Սարգիսը մասնակ-  
ցեց բարբարոսների դեմ մղված բազմաթիվ պատե-  
րազմներին և բոլորի մեջ էլ Աստված նրա հաջո-  
ղություն շնորհեց: Այս պատճառով էլ թագավորի  
ու իր մեծավորների սիրելին դարձավ: Իսկ երանե-  
լին այս հաղթանակները ոչ թէ իր անձին էր, այլ  
Աստծո զորությանն էր վերագրում:

Զինորական բոլոր պարապունքների մեջ, երբեք  
չէր մոռանում ու թերանում իր հոգևոր պարտա-  
կանությունները: Միշտ առանձնանալով աղոթք,  
երկրպագություն և գոհության պատարագներ էր  
մատուցում Աստծուն, այնքան ինչքան որ կթույ-  
լատրեր հեթանոսների մեջ լինելու պարագայում:

Ու որպեսզի արգելի իրեն ենթակա զինվորնե-  
րին կուռքերին զոհ մատուցելու, ինքը բազմաթիվ  
կենդանիներ էր մորթել տալիս և առատորեն բա-

**Ժանում աղքատներին:**

Ահա թե ինչ է պատմում պատմիչը նրա մասին.  
- Նա ոչ միայն իր անձի մաքրության համար էր բանավոր պատարագ մատուցում, այլև անբան անասուններ գոհելով իր նախնիների սովորության համաձայն, բախչում էր աղքատներին և կարույալներին<sup>1</sup>: Նույնը սովորեցնում էր նաև իր շրջապատին, որպեսզի անասուններ մորթեն և Աստծո անունով կերակրեն անորթիներին և աղքատներին:

1. Այժմ մեր ազգի մեջ տարածված մատաղի հինավուրց խորհուրդի մի վկայություն է սա, որը հերքում է աղանդավորների այն թյուր կարծիքը, որ իբր դա գոհաբերություն է:

Այն ժամանակ լուր հասավ թե Հուլիսառի գորագնդներից մեկը ասպատակեց և ավերեց որը գտնվում էր Շապուհի գերիշխանության տակ և սահմանակից էր Հոռոմների երկրին:

Թագավորը փութով ուղարկեց սուրբ Սարգսին Տաճկաստանի կողմերը պահպանելու համար, նրա որդուն պահելով իր պալատում:

Սուրբն առնելով իր զորագունդը՝ հասավ նախատեսված վայրը և այնտեղ մնաց երեք ամիս: Դիրք ընդունելով Հուլիսառսի ուժերի դեմ, երկիրը պաշտպանեց թշնամու ասպատակություններից:

Այս՝ ըստ չնորհալի պատմիչի: Իսկ ըստ ուրիշ մի պատմիչի, լուր տարածվեց թե Տաճկաստանի թագավորը կամ մեծ նախարարը ապատամբելով պարսիկների դեմ, բազմաթիվ զորքերով եկել, հասել է Պարսից սահմանը և պետք է ավերի և ասպատակի ողջ երկիրը: Այդ պատճառով մեծաքանակ զորք տալով Սարգսին՝ ուղարկեցին տաճիկների վրա:

Սուրբ Սարգիսի զորքը, տեսնելով թշնամիների անհամար բազմությունը, որոնք զինված էին ծանր ու թեթև զենքերով, զարհուրեցին և սկսեցին ասել.

- Հիմա ամենքս էլ նրանց ձեռքից կորսվելու ենք, որովհետև մեզ համար անհնար է, որ կարողանանք պատերազմել այսքան անհամար բազմության դեմ: Ոմանք նույնիսկ սկսեցին ասել.

- Հեռանա՞նք այստեղից, Սարգիս, որովհետև կորստի ես մատնում թե՛ քեզ, թե՛ մեզ:

Իսկ երանելի Սարգիսը տեսնելով որ իրենները շատ են վախենում, հարմար գտավ նրանց հայտնելու իր հավատքի ծմբարտությունը և զորությունը, ու բացահայտ ցույց տալ նրանց հեթանոսական մոլոր ստությունն ու տկարությունը:

Եվ սկսեց խոսել առաքինի զորավարը՝ հաստատուն հավատք ունենալով Հիսուս Քրիստոսի վրա և լցված Աստծո սիրով և իր չնորհալի բերանը բացելով ասաց նրանց:

- Եղբայրներ և զինակիցներ, եթե ձեր ամբողջ սրտով հավատաք երկնքի և երկրի Արարչին, ձեր սրտերը երբեք պիտի չզարհուրեն մեր թշնամիների գորքի բազմությունից, այլ Աստծո օգնությամբ ձեզանից յուրաքանչյուրը նրանցից հազարը պիտի հալածի, երկուսը, նրանց բյուրավորները փախուստի մատնեն: Արդ, հավատացեք Եղբայրներ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվանը, և մի՛ սարսափեք, հավատացե՛ք և Տեր Աստծու անունը կանչեք և Նա իր հրեշտակին կուղարկի և կհալածի ձեր թշնամիներին: Եվ այս էլ ասեմ ձեզ. եթե ամբողջ սրտով հավատաք, ես երաշխավոր կլինեմ Քրիստոսի մոտ, և ձեզանից ոչ մեկը չի պակասի: Ձեր ահը նրանց վրա պիտի ընկնի և նրանք փախչելու են ձեր առջևից: Իսկ եթե ոչ, ձեր առջև ունեք կրկնակի կորուստ, թե՛ մարմնի և թե՛ հոգու, որովհետև ձեր աստված կոչվածները որեւէ ձևով չեն կարող օգնել ձեզ, քանի որ զորություն չունեն: Եվ ոչ էլ լուսատուները՝ որոնց պաշտում եք, ոչ էլ կուռքերը՝ որոնց պատվում եք. որովհետև ականջ ունեն, բայց չեն լսում, աչքեր ունեն, բայց չեն տեսնում, քիթ ունեն, բայց չեն հոտոտում, ձեռքեր ունեն, բայց չեն շոշափում, ոտքեր ունեն, բայց չեն քայլում, և նրանց բերանում չունչ չկա: Եվ նրանք, որ սարքեցին դրանք, նրանց պես պետք

է լինեն ու, բոլոր նրանք, որ նրանց վրա են հույս դրել: Ոչ էլ կրակը, որին դուք որպես աստված եք պաշտում ու երկրպագում:

Այդ ժամանակ պատասխանեցին զինվորները և ասացին.

- Իսկ ո՞ւր է քո Աստվածը, Մար Սարդիս. և եթե մեր արձանները աստված չեն, ցո՛ւյց տուր մեզ ճշմարիտ Աստվածդ՝ որ տեսնենք ու հավատանք նրան:

Եվ երանելին պատասխանեց.

- Իմ պաշտած Աստվածն Աստված է բոլոր գությունների, երևելի թե աներևույթ և Նա բնակվում է անմերձենալի լույսի մեջ:

Այս խոսքերից հետո սկսեց քարոզել ճշմարիտ հավատքի մասին, վկայելով ամենասուրբ երրորդության և մեկ Աստվածությունը և հերթականությամբ պատմեց Արարչի սքանչելագործությունները թե ինչպես մարդուն ստեղծեց ըստ Իր պատկերի, և թե ինչպես է խնամում բոլոր արարածներին: Նախ քարոզեց մարգարեների մարգարեությունները, Աստծո Բանի վրկագործ մարդեղությունը՝ Նրա աշխարհ գալով. Նրա կենարար տնօրենությունները, գործած հրաշքները, խաչվելը, թաղումը, երրորդ օրվա հարությունը և փառքով երկինք համբարձվելը: Եվ որ դարձյալ պետք է գա նույն

մարմնով՝ դատելու մարդկանց իրենց գործերի համեմատ. բարեգործներին ու ուղղահավատներին՝ փարձատրելով, իսկ չարերին և անհավատներին հավիտենական տանջանքների մատնելով։ Ահա այս է ճշմարիտ աստվածությունը, որին եթե ձեր ամբողջ սրտով հավատաք և հրաժարվեք ձեր խավար պաշտամունքներից՝ կընդունեք հավիտենական կյանքը և երբ նա գա իր Աստվածային փառքով՝ ձեզ անհավատների հետ միասին չի մատնի հավիտենական հրին ու դժոխքի տանջանքներին։

Այս և ուրիշ շատ բաների մասին խոսեց բանակի մեջ երանելի Սարգիսը ամբողջ զորքերի առջև. և նրա վարդապետության շնորհը մտավ բոլոր զինվորների մեջ և նրանք միաբերան աղաղակեցին։

– Հավատո՞ւմ ենք Սարգիսի Աստծուն։

Ապա համարձակաբար հարձակվելով թշնամիների վրա ավերեցին նրանց բանակը. շատերին սպանեցին, մնացածներին հալածեցին։

Թշնամի զորքերի բազմությունները մասերի բաժանված, ուզում էին գունդ-գունդ հարձակվել այն գավառի վրա, որը գտնվում էր Սարգսի պաշտպանության ներքո։ Բայց ամենքն էլ խարխափելով, մասախլապատ ճամբաներին մոլորվելով, չէին կարողանում հասնել իրենց նպատակադրված վայրը։ Դրանից հետո ցիրուցան լինելով

չէին կարողանում իրար գտնել։ Իսկ եթե հանկարծ իրար էին գտնում, պատմում էին միմյանց անմարմին զորքերի տեսիլքների մասին, և նրանց ձայնը, որ ասում էր, թե «Մի՛ հանդգնեք պատերազմել Աստծո ծառայի՛ սուրբ Սարգսի դեմ, եթե ոչ ամենքդ էլ կկորսվեք»։

Սուրբն այս ամենը տեսնելով և լսելով, փառք էր տալիս ամենազոր Աստծուն և իր զինվորներին հավաքելով բանակատեղում, ասում էր նրանց.

– Տեսնո՞ւմ եք Բարձրյալի բազուկը. մե՛ծ է Տերը և մե՛ծ են Նրա սքանչելիքները։ Եկե՛ք, եղբայրներ, փառք տանք մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որ իր ողորմությունը ցույց տվեց իր ծառաներին և իր զորությունը՝ մեր հակառակորդներին։

Իսկ զինվորները ճշմարիտ հավատքի մեջ զորացած, աղաղակում էին և ասում.

– Մե՛ծ է քրիստոնյաների Աստվածը և անչափելի է Նրա զորությունը։ Այսուհետ հավատում ենք ամենասուրբ երրորդությանն ու մեկ Աստվածությանը՝ որ քարոզեց Սարգիսը։

Դրանից հետո շատերը մկրտվեցին քահանաների ձեռքով և բոլորն էլ երկրպագում էին Աստծուն և ուրախանում էին սուրբի վարդապետությամբ։

Սակայն նրանցից ոմանք ուզում էին դեռևս զոհեր մատուցել ըստ հեթանոսական սովորու-

թյան, իբրև թե հանուն Աստծո, կամ ի պատիվ Քրիստոսի՝ որին հավատացին: Սուրբ Սարգիսը արգելեց նրանց, հայտնելով թե անբաների զոհը պետք է խափանվի, ճշմարիտ և կենդանարար Աստծո Գառի պատարագումից հետո: Այնուհանդերձ հրաման տվեց կենդանիներ մորթել և ուրախությամբ ճաշակել՝ ի փառ Աստծո, բաժանելով կարույալներին՝ գյուղերի և մոտակա վայրերում:

Իսկ բանսարկու սատանան զինվորներից ոմանց դրդեց, որոնք գեռևս մնացել էին պարսկական մոլար աղանդի մեջ, մատնելու սրբին: Նրանք գնալով Շապուհ թագավորի մոտ՝ ասացին.

– Արքա՛, Սարգիսը ապստամբեց ձեր աստվածների և ձեր դեմ: Նա Հիսուս Նազովրեցու մասին քարոզեց և համայն զորքը ապսամբեցրեց, տանելով իր մոլորության հետեւց: Ու նաև համաձայնություն է կնքել հռոմեացիների հետ:

Թագավորը, այս ամենը լսելով, շատ խոռվեց և իր ավագանու հետ խորհում էր թե ինչ պետք է անել, որպեսզի աղմուկ չելնի և երկպառագություն չծագի զինվորների մեջ: Եվ առյանի խորհով, կեղծավորաբար թանկարժեք նվերներ ուղարկեց, ինչպես նաև հետեւյալ նամակը գրեց.

– Քո մասին շատ գովասանքներ լսեցինք, պատվավոր հրամանատարդ Սարգիս, և թե դու հավա-

տարիմ ես մեր թագավորությանը: Շատ ուրախացանք, և մեր սերը քո հանդեպ բազմապատկվեց՝ որպես հավատարիմ ու իմաստուն ծառայի: Այս նամակի հետ միասին մեր թագավորությունը քեզ՝ քո մեծությանդ վայել արժանավոր նվերներ ենք ուղարկում: Ողջ լինես:

Մի քանի օր անց, թագավորը երանելի Սարգսին որպես պատվիրակ ուղարկեց իր որդուն՝ Մարտիրոսին, որը պալատում էր գտնվում, ուրիշ երկելի անձնավորությունների հետ միասին, որպեսզի առանց կասկած առաջացնելու, շուտափույթ արքունիք վերադառնա: Նրանց հետ ուղարկեց նաև հետեւյալ նամակը.

– Վեհագույնդ զորագլուխների մեջ՝ ով Սարգիս, քո կորովամիտ իմաստությանդ համբավը մեզ հասավ: Արդարև, իմաստուներին հատուկ տրամաբանությամբ էր, որ ապահովեցիր երկրիս խաղաղությունը, հաղթելով թշնամիներին: Արդ, քանի որ այս ամենից հաջողությամբ գլուխ հանեցիր, մեր թագավորությունը հրամայում է՝ քո զավակի հետ շտապ գալ, որովհետեւ կարիք է զգացվում քո կատարյալ խոհեմությանդ արժանի հռովմեացիների թագավորության մասին խորուրդների, որոնք մտադրված են մեր դեմ պատերազմելու: Ողջ լինես:

Երբ պատանի Մարտիրոսը ճանապարհ ելած

գալիս էր իր ուղեկիցներով և մոտեցել էր այն սահմաներին՝ ուր գտնվում էր իր հոր բանակը, հանկարծ ճանապարհին պաշարվեց թշնամու կանների կողմից և իր ուղեկիցների հետ ձերբաւակեց և հակառակորդի բանակը տարվեց:

Եղբ երանելի սուրբը լսեց այս պատահարի մասին, տիրությունը պատեց իրեն և իր զորքին: Սակայն անտեսելով մարդկային օգնությունը՝ Աստծուն ապավինեց: Ծնկի եկած՝ արտասունքով աղաչում էր Աստծուն, հիշելով իր աղոթքի մեջ այն բոլոր հրաշագործությունները՝ որոնք կատարվել էին դարերի ընթացքում. Նոյի, Աբրահամի, Իսահակի, Հակոբի և բոլոր նահապետների և սուրբ առաքյալների ժամանակ, ու այսպես ասում.

Դինչական որ նրանց աղոթքը լսեցիր, Տեր, լսիր նաև մեղավորիս աղոթքը: Եվ ինչպես որ արդար Հակոբին ողորմություն արեցիր, որ Հովսեփին տեսնի, ինձ էլ վերստին որդուս չնորհիր: Որպեսզի այս ժողովուրդը՝ որոնք քո ծառայի քարոզությամբ Քեզ դարձան, գայթակղվելով դարձալ չկորչեն: Այնպես արա, որ նրանք տեսնեն Քո զորությունն ու ողորմությունդ իմ հանդեպ, որ կրկին փառակորվի քու սուրբ Անունը:

Եվ անցնելով խիստ պահեցողության, երեք օր անդադար աղոթում էր՝ գիշեր ու ցերեկ, Աստծուն

ասելով.

Դպրիտի ուտեմ ու չպիտի չխմեմ: Ահա քո ծառան քո առջևու է. արդ ո՞ւր է իմ որդին: Ինչո՞ւ ինձ մատնեցիր իմ թշնամիների ձեռքը՝ որ նախատեն, և որդուս՝ նույն թշնամիների ձեռքը, նույնպես նախատվելու համար: Դու չէի՞ր ասողդ՝ Ղազարոսի համար, թե ժողովրդի համար եմ անում, որ հավատան ինձ: Ինչո՞ւ իմ որդուն մատնեցիր նրանց ձեռքը և ինձ թշնամիներիս առջև նախատանքի առարկա դարձրիր: Որովհետև Խաչի թշնամիները պիտի հոխորտան և պիտի ասեն. «Ահա Սարգսի պաշտած Աստվածը թող հիմա իրեն վերադարձնի իր որդուն»: Բայց ես ասում եմ.

Դու ես իմ Աստվածը և Քո մոտ չկա անհնարին ոչինչ, Տեր իմ Հիսուս Քրիստոս: Դու կարող ես ինձ փրկել իմ թշնամիների ձեռքից և ինձ վերադարձնել իմ որդուն:

Նա երեք օր անընդհատ չէր դադարում մեծ հավատքով խնդրե Աստծուն, ինչպես զավակը իր հորից է խնդրում սիրով ու համոզումով: Եվ աշա չորրորդ օրվա ժամը երեքին, հանկարծ տեսավ որ թշնամու բանակից մի հեծյալ է դալիս: Նա իր հետ բերել էր գերված պատանուն և նրա հետ եղողները, Սարգսի զորքերի առջև.

Մեր բանակից յոթը հոգի գերի բռնեցին ու

բերեցին այս պատանուն: Երբ բերեցին՝ նույն օրն էլ յոթն էլ մեռան: Հետո ամենատարբեր փորձություններ ու հարվածներ տեղացին մեր բանակի վրա ու մեր զորքերի մեջ խռովությունն անպակաս դարձավ. մինչև իսկ սկսեցին իրար սպանել:

Դրանից հետո մեր զորավարը տեսիլք տեսավ և ասաց իր զորապետներին.

- Մեր վրա եկած հարվածները, այս պատանու պատճառով է: Ծո՛ւտ առեք և տարեք: Որովհետև եթե այս պատանուն իր հորը չվերադարձնենք, մեր այբողջ զորքը կընաջնջվի:

Ահա այդ պատճառով նրան այստեղ բերեցինք. ու չգիտեմ թե ո՞ւմ զավակն է: Ցո՛ւյց տվեք ինձ իր հորը, որ պատանուն վերադարձնեմ: Թերևս այս ձևով Աստծո բարկությունը դադարի մեր բանակի վրայից:

Երբ Սարգիսի զինվորները լսեցին այս ամենը, աղաղակեցին և ասացին.

- Իրապես մեծ է Սարգիսի Աստվածը և չկա ուրիշ Աստված՝ որ այսպիսի հրաշքներ գործի:

Իսկ երանելի Սարգիսը գոհություն մատուցելով ասում էր.

- Աստծո բոլոր ծառաներ, օրհնեցե՛ք Տիրողը:

Եվ զորքը ձայնակցում էր սրբի սաղմոսերգությանը:

Իսկ Սարգիսը իր տղայի ձեռքը բռնած՝ փառք տվեց Աստծուն և ասաց.

- Ծնորհակալ եմ քեզանից՝ Հայր, մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որ այս ամենը ծածկեցիր իմաստուններից և գիտուններից և Հայտնեցիր տղաներին և մեղավորներին:

Եվ սուրբն աղոթք արեց նաև թշնամու բանակի համար, որպեսզի Աստծո բարկությունը դադարի նրանց վրայից: Եվ երեք օր հետո լուր եկավ թշնամու բանակից՝ թե արդարև մեծ է զորավար Սարգսի Աստվածը, որովհետև նրա աղոթքներով դադարեցին հարվածները մեր բանակի վրայից: Այժմ մենք էլ ենք հավատում Սարգսի Աստծուն:

Եվ երանելին ասում էր.

- Գոհություն քեզ, Տեր իմ Հիսուս Քրիստոս, որովհետև դու հայտնեցիր Քեզ նրանց, որոնք Քեզ չէին ճանաչում:

Սուրբ Սարգիսը, իր որդու՝ Սարտիրոսի ազատության օրվա առթիվ, իր ամբողջ բանակում ուրախության տոնի վերածեց: Եվ բոլորն էլ Տիրոջ կատարած հրաշքներով ուրախանում էին հոգով ու մարմնով, փառաբանելով ծշմարիտ Աստծուն:

Տիրոջ կատարած այս սքանչելիքների համբավը արագ տարածվեց ամբողջ աշխարհում: Լուրը շուտով հասավ և նաև Պարսից արքունիք: Այս դեպքի

մասին ոխակալ իշխաները ասում էին..

- Մենք կարծում էինք թե դավադրությամբ կկարողանայինք կործանել Սարգսին, բայց նա դեռ ողջ է ու ամբողջ երկիրը մոլորեցրեց և ամենքը հավատում են նրա կախարդություններին:

Իսկ երբ սուլը Սարգսը տեղեկացավ որ իրեն ու իր որդուն թագավորը հապճեպ պալատ է կանչում, հոգով հասկացավ թագավորի ու նրա իշխաների չար մտադրության մասին, և իր մոտ կանչելով իր բոլոր զինվորներին՝ որոնք հավատացին Քրիստոսին, ասաց նրանց.

- Եղբայրներ, ահա հասել է ժամանակը, երբ պետք է ի հայտ գա մեր հավատքի բարեպաշտությունը և մեր Տեր Հիսուս Քրիստոսին դավանենք մարդկանց առջև, որպեսզի նա էլ մեզ դավանի իր Հոր առջև:

Իսկ զինվորները միաբերան ասացին.

- Քեզ հետ ենք, ո՞վ պատվական հայր՝ ապրելու թե մեռնելու համար:

Եվ սուլըն ասաց.

- Աստծուց մեզ հրամայված է չծածկել մեր հավատքի լույսը, այլ դնել աշտանակի վրա և քարոզել տանիքների վրայից: Ու չվախենալ նրանցից, որ մարմինը կարող են սպանել, բայց ոչ հոգին: Բայց ես՝ անպիտանս, ամեն բանի մեջ անպատ-

րաստ գտնվեցի մեր Տիրող հրամանին, քանզի մինչև հիմա գաղտնի պահեցի թագավորից և նրա մեծավորներից իմ հավատքի լույսը, իբրև ճրագ կողովի տակ պահած, մարդկանցից ծածկելով: Իսկ հիմա եղբայրներ, աղաչեր Տիրոջը, որ ինձ քաջություն տա, համարձակաբար քարոզելու Աստծո անունը՝ թագավորների ու իշխանավորների առջև. Թող Տերը ամրացնի իմ ոտքերը հավատքի վեմի վրա, որպեսզի չսասանվեմ մարդկանցից, որոնց առջև պիտի ելնեմ:

Այն ժամանակ զինվորները պատասխանեցին սուլըն և ասացին.

- Աղաչում ենք, Տեր ականջ դիր Քո ծառաների խոսքին: Մենք խորհուրդ ենք տալիս մեր տիրոջը չգնալ թագավորի մոտ և չտեսնել բռնավորի երեսը: Բայց եթե այդ պատճառով նրա ցասմանը հանդիպես, մի՛ վախեցիր, մենք բոլորս պատրաստենք մեռնելու այն բոլոր պատերազմների մեջ՝ որոնք քո դեմ կպատրաստվեն: Եվ մանավանդ, եթե մեր դեմ պատերազմեն, մենք կհաղթենք նրանց մեր Տիրոջ զորությամբ, Որին որ հավատացինք:

Սուլըն պատասխանեց նրանց և ասաց.

- Տերը մեզ չի հրամայել զորանալ մարմնով, այլ հոգով: Եվ ոչ թե պատերազմական հնարքներով, այլ՝ մեր նեղությունների մեջ համբերելով հաղթել

մեր թշնամիներին: Արդ, արգելք մի՛ եղեք իմ ընթացքին՝ կյանքի ճանապարհի մեջ, այլ աղոթեցեք, որ Տերը արժանի անի իր սուրբ Անվան համար մեռնելու, և Նրա աջը թող հովանի լինի ձեզ և թող հաստատի ձեզ ճշմարիտ հավատքի մեջ, որ ստացաք Սուրբ Հոգու չնորհով: Ու եթե իրեն ամբողջ սրտով սիրեք, ինքն էլ ձեզ փրկություն կտա այս կյանքի մեջ ու հավիտենական կյանքի կարժանացնի իր բոլոր սրբերի հետ մեկտեղ: Ուրեմն, դուք այստեղ մնացեք և հավատարմությամբ կատարեք արքունական հրամանը, իբրև Աստծուց տրված և ոչ թէ մարդկանց կողմից: Իսկ ես գնամ այն պարտականությանը, որին ինձ կանչեց Աստված:

Այս ասելով և նրանց մտքերը հավատքի մեջ զորացնելով, իրարից բաժանվեցին առատ արտասուրք թափելով:

Եվ սուրբը որդու ու մի քանի զինվորների հետ ճանապարհ ընկավ և հասան արքայական պալատ:

Երբ Շապուհը տեսավ, շատ ուրախացավ և իր խորհրդատու ավագանուն ասաց.

- Կարծում եմ սրա դեմ կատարված ամբաստանությունը անիրավությամբ է եղել և չարախոսները նախանձից դրդված են խոսել, ոչ թե ուղղամտությամբ:

Ու ասաց Սարգսին.

- Բարի է գալդ, ո՞վ հավատարիմ և իմաստունդ իմ զորագլուխների մեջ: Մեծամեծ պարգևներ պետք է ստանաս մեզանից, մեր հանդեպ ցուցաբերած անբասիր ծառայությանդ համար: Այդ պատճառով մեր թագավորությունը քեզ պիտի բարձրացնի և բոլոր զորքերի վրա զորագլուխ դարձնի՝ քո խոհեմության ու իմաստության համար:

Նույն ժամանակ նրան չնորհվեցին բազմաթիվ նվերներ:

Իսկ սուրբը Սարգսիսը այս խոսքերից չխարվեց, ոչ էլ ճշմարտությունից խոտորվեց՝ մեծ խոստումների պատճառով, այլ նրան պատասխանեց այս խոհուն խոսքերով.

- Գոհություն եմ հայտնում իմ Աստծուն, որ ինձ ազատեց իմ թշնամիների ձեռքից, որոնք պարտվեցին ոչ թե իմ իմաստությամբ կամ զորությամբ, այլ ամենազոր Աստծո կարողությամբ: Նրանից են նաև ինձ չնորհված պարգևները, որովհետեւ նա է որ ձեզ իմաստություն տվեց ճշմարտությունը ճանաչելու:

Սուրբը այս ասելուց հետո, հեռացավ թագավորի մոտից: Իսկ թագավորը կողքիններին ասաց.

- Ես այս մարդու ասածները ճիշտ եմ գտնում:

Իսկ չարախոսները ասացին թագավորին.

- Քաջ թագավոր, այդ Սարգսիսը նազովրեցինե-

ըի ուսմունքի աղանդին է հարում և, Աստված ասելով՝ ոչ թե մերիները նկատի ունի, այլ Նազովրեցի Հիսուսին: Եվ եթե ձերդ թագավորությունը ուզում է, թող հարցնի նրան, և կհամոզվի մեր խոսքերի ճշմարտացիության մեջ:

Լսելով այս բաները, թագավորը շատ տրտմեց, որովհետև չէր ուզում կորցնել այսպիսի քաջ զինվորին: Ուստի խորհում էր սրտի մեջ, թե տրամաբանական ի՞նչ ելք գտնի:

Եվ այդ օրերին եկավ իրենց աստվածների տունը: Թագավորից հրաման ելավ, որպեսզի բոլոր բազմությունները հավաքվեն ատրուշաների մոտ, որտեղ կրակ պետք է վառեին՝ ըստ պարսկական օրենքի: Այստեղ էին նաև տասներկու կուռքերի արձաները:

Նույն հանդեսին կանչվեց և Սարգիսը իր պատվական զորականների ու որդու հետ:

Երանելին հասկանալով, որ ժամանակը մոտեցել է Աստծո համար պատերազմելու. աղոթքի կանդնեց ու ասաց.

- Տեր Աստված, Քեզ հուսացողների Փրկիչ, որ խոստացար ծառաներիդ և ասացիր. «Երբ ձեզ դատավորների առջև հանեն, հոգ մի անեք, թե ի՞նչ պետք է պատասխանեք, որովհետև Ե՛ս պիտի տամ ձեզ խոսք և իմաստություն, որին չպիտի կարողա-

նան ընդդիմանալ ձեր հակառակորդները»: Արդ, երբ այս հանդեսի մեջ բերանս բացեմ, ինձ խոսելու շնորհ տուր և զորացրու ինձ, որ համբերեմ չարչարանքներին ու մահվանը, որոնք պիտի կրեմ հանուն Քո սուրբ Անվան: Եվ Քեզ փա՛ռք հավիտյանս հավիտենից. ամեն:

Նույն աղոթքը անում էր պատանի Մարտիրոսը նույնպես, միանալով իր հորը: Եվ նույն հոգով սպառագինված պատրաստվում մտնելու նահատակության ասպարեզ:

Աղոթելուց հետո երկուսն էլ ընդառաջ գնացին արքայի կանչին ապարանքի մեջ, մեհյանի մոտ հանդիպելու արքային:

Թագավորը տեսնելով նրան, բարձրաձայն աղաղակեց:

- Սարգի՛ս, իմ պատվական զորապետ, արի մեզ հետ տաճար մտիր և բոլորիս նման կրակին զոհ մատուցիր և որպես աստվածասեր խունկ ծիմիր աստվածների առջև: Այսպիսով քո հանդեպ չարախոսողները ամոթապարտ կլոեն ու դու առավել ևս փառքով կպայծառանաս:

Սուրբ Սարգիսը պատասխան տվեց և ասաց.

- Ես ճշմարիտ Աստծուն եմ իմ անձը ամբողջովին զոհ մատուցում, նույնը և իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, Որն ինձ սիրելու համար խաչվեց: Քո

կուռքերը ես գիտեմ և կրակին աստված ասել չսու-  
փրեցի: Ես պաշտում եմ կրակի և արեկ Արարչին  
ու երկրագություն եմ անում Նրան՝ որ երկինքն  
ու երկիրը ստեղծեց ու միջի բոլոր արարածներին:  
Որը կենդանի ու հավիտենական թագավորն է:  
Որին և գու՝ ով թագավոր, պարտավոր էիր երկր-  
պագություն անել և Նրան փառավորել, եթե  
իմաստություն ունենայիր, և ոչ թե նյութեղեն  
արարածներին՝ որոնք Նրա ձեռքով են ստեղծված,  
կամ անշունչ արձաններ, որոնք մարդկանց կողմից  
են շինված, իբրև աստվածներ:

Թագավորը այս լսելով ասաց.

- Հիմա հայտնի դարձավ քո մոլորությունդ, ով  
հիմարությամբ լցված: Դու ինքդ քեզ զրկում ես  
այն բոլոր բարիքներից, որ մտադրված էինք անել  
քեզ համար: Դու քո սերը կապեցիր մի հրայի, որն  
իր մեղքերի համար խաչվեց:

Եվ ուրիշ շատ այլ բառերով հայհոյում էր  
Քրիստոսին և ասում.

- Մի՛ շատախոսիր, այլ վախեցի՛ր աստվածնե-  
րից և զո՞հ մատուցի նրանց:

Իսկ երանելին չկարողանալով համբերել, լիքը  
բերանով թքեց ամբարիշտի դիմաց՝ նախատելու  
համար նրա անօրեն կուսակաշտությունը: Եվ Սուրբ  
Հոգուց զորություն առնելով ասաց.

- Զե՛մ վախենում ո՛չ քեզանից, ո՛չ էլ քո կուռ-  
քերից, ոչ էլ պետք է պաշտեմ այդ գարշելիներին,  
այլ սուրբ և ծմբարիտ Աստծուն, Որի դեմ անզոր են  
հայհոյողների շրթունքները:

Սաստիկ բարկանալով, Շապուհը հրամայեց  
քարով խիել նրա բերանին ու կապել երկաթե կա-  
պանքներով և քարշ տալ փողոցներով, մինչև որ  
սրբի կողերի կաշին քերթվի:

Եվ քաշողները ասում էին սուրբին.

Սարգիս, իրապե՞ս լքեցիր մեր աստվածներին  
ու պաշտամունքները և հետևեցիր օտար  
Աստծուն, որին կոչում եք Հիսուս Քրիստոս: Ի՞նչ  
է քո մաքինը՝ Սարգիս, ասա մեզ:

Առաքինի նահատակն ասաց նրանց.

- Լա՛վ, ցույց տվեք ինձ ձեր կուռքերը, որպես-  
զի տեսնեմ նրանց զորությունը, ես ձեզ պիտի  
ցույց պիտի տամ իմ Աստծո զորությունը: Երբ  
մարդիկ այս լսեցին, շատ ուրախացան և թագավո-  
րին լուր տվեցին:

- Հրամայիր, ասացին, որպեսզի գա և մեր աստ-  
վածներին երկրագություն անի:

Եվ մեծամեծներից ոմանք թագավորի հրամա-  
նով եկան, իրենց հետ բերելով զորագլխին՝ զորքե-  
րի հետ միասին: Կանգնեցրին Սարգիսին և Մար-  
տիրոսին տասներկու կուռքերի առջեւ:

Այն ժամանակ Սարգիսը իր սրտի մեջ աղաղաւեց և ասաց.

- Օգնի՛ր ինձ, Տե՛ր Հիսուս Քրիստոս, ինչպես օգնեցիր բնզում պատերազմների ժամանակ:

Եվ դառնալով կոապաշտներին ասաց.

- Սրա՞նք են ձեր տասներկու աստվածները: Սրանցից չորսը՝ վիշապների բերաներն են. չորսը դեերի արձաններ, չորսն էլ եղների գլուխներ: Արդ, ու՞մ երկրպագեմ, կամ որի՞ն աղոթեմ:

Իշխաներն ու մոգերն ասացին.

- Մի՛ անարգիր, Սարգիս, որովհետև մեր անմահ աստվածներից մեկին օձ ես անվանում, իսկ մյուսին՝ վիշապ:

Սուրբ Սարգիսն ասաց.

Ասածս ճշմարիտ է, որովհետև մարդկանց այդ ձեռքերի գործը իրապես գարշելի են, որովհետև ներսից կավից են, իսկ արտաքինից՝ պղնձից: Բայց ես նախապես ասացի, որ ցույց տվեք ինձ, թե ձեր կուռքերը կենդանի աստվածներ են: Ապա թե ոչ, ե՞ս ձեզ պիտի ցույց տամ իմ կենդանի Աստծո զորությունը, իմ Աստծո՝ Որն իր Խաչով լուսավորեց երկինքն ու երկիրը: Արդ, ես ինչ որ տեսնում եմ, գիտեմ, որովհետև դրանք դեերի պատկերներ են, և չեն կարող խոսել: Վիշապները բերաններ ունեն, բայց չեն կարող ուտել, եզան գլուխներ են, բայց

չեն կարող ձայնել:

Իսկ կոապաշտները իրար ասացին.

- Վա՛յ մեզ, քանզի մեր աստվածներին անարգեց, և նրանք կըարկանան մեր վրա:

Սուրբ Սարգիսը պատասխանեց և ասաց.

- Սուրբ Գիրքն ասում է. «Դրանք շինողները նրանց պես պիտի լինեն. նույնպես և դրանք պաշտողները»:

Այդ ժամանակ քուրմերն ասացին.

Շա՛տ բարկացար, թշնամացար և անարգեցիր մեզ ու աստվածներին, ո՛վ մարդ:

Իսկ սուրբն ասաց.

- Թողեք մոտենամ ձեր աստվածներին:

Իսկ մյուսները կարծում էին, թե ուզում է երկրպագություն անել և թույլ տվեցին:

Իսկ նա սրտի մեջ աղոթելով Տիրոջը օգնության կանչեց, խաչակնքվեց և իր սիրտը ճշմարտությամբ զորացնելով՝ հանեց ձեռքի և պարանոցի շղթաները, և նրանցով հարփածեց կուռքերի ծնկներին ու անմիջապես բոլորը խորտակվեցին, փշրվեցին ու ցիրուցան եղան:

Եվ ասաց նրանց.

- Ո՛վ անմիտներ, ահա ձեր պաշտած բաները փշրվեցին և կրակը՝ որին երկրպագություն էիք անում, ցնդելի ծուխ է:

Եվ երբ մոգերն ու այնտեղ եղող հեթանոսները այս ամենի ականատեսը եղան, բարկությամբ դեպի սուրբը շարժվեցին և նրան բռնելով՝ սկսեցին այս ու այն կողմ քարշ տալ և աղաղակում էին թե պիտի սպանեն են նրան:

Անորենների այս բուռն հարձակման հետևանքով սպանվեց նրա Մարտիրոս որդին, գործով արժանի լինելով վկայի անվան, պատկակից լինելով նախապես Քրիստոսի համար զոհված վկաներին:

Բայց սուրբ Սարգսի վրա նույն ժամանակձեռք չբարձրացրին, որովհետև արքունական զորքն էլ զարհուրած դողում էր նրանից ու սպասում էին թագավորի հրամանին:

Պետք է տեսնել այն սոսկումն, ապշությունն ու կոծը, որին ենթակա էին կուապաշտները: Ումանք իրենց հագուստներն էին պատառոտում, ուրիշներն էլ իրենց գլխի մազերն էին փետում ու կոծելով շտապում թագավորի մոտ: Բոլորն էլ բարձրածայն աղաղակում էին և տանելով կուռքերի փշուրները ցույց էին տալիս պալատի մեծամեծներին և ասում:

- Վա՛յ մեզի, այս ի՞նչ պատուհաս էր որ հասավ մեր ու մեր երկրի վրա: Ուրիշ որտե՞ղ կան այնպիսի աստվածներ, որ մեր երկիրը ապրեցնեն:

Իսկ իշխանները մեղադրում էին զորքին ու

ասում.

- Զեզ նրանց հետ ուղարկեցինք. ինչո՞ւ իրենց չբռնեցիք, որպեսզի մեր աստվածներին վնաս չհասցնի:

Զինվորները ասացին.

- Հավատացե՛ք, եթե դուք էլ լինեիք այնտեղ, չէիք կարող զսպել իրեն: Եվ մինչ նրանք խոսում էին, սուրբ Սարգիսը նրանց ետևից եկավ ու կանգնեց ատյանի առաջ. Ճեռքում շղթաները բռնած:

Իշխանները սարսափած իրար էին ասում.

- Չլինի թե մեզ էլ սպանի:

Եվ նրան ասացին.

- Սարգիս, ինչո՞ւ փշրեցիր մեր աստվածներին:

Այն ժամանակ սուրբ Սարգիսը ցույց տալով ճեռքի շղթաները, ասաց:

- Այս է, որ փշրեց ձեր կուռքերը: Եվ նրանք չկարողացան հաղթել ինձ: Եվ եթե ես Աստծուց հրաման ունենայի, կուռքերի հետ միասին կբնաջնջեի նաև կուապաշտներին: Բայց ահա տեսնում եք, որ գառան պես ձեր առջև կանգնած եմ, ինչ ուզում եք, արեք ինձ հետ:

Եվ մինչդեռ բազմությունը ցանկանում էր տեղանուտեղը սպանել, թագավորը արգելեց, որովհետև նրա որդու մահվան պատճառով արդեն տրտմած էր, քանի որ առանց իր հրամանի է տեղի ունեցել:

Եվ կանչելով իր մոտ Սարգսին, ասաց.

- Ուզածիդ պես անարգեցիր մեր աստվածներին ու ներեցի քեզ, բայց ինչպե՞ս համարձրակվեցիր փշրել դրանց:

Սուլը պատասխան տվեց նրանց ասելով.

- Քանզի ես Սուլը Գրքից լսել եմ, որ ասում է. «Նրանց երկաթե գավազանով պետք է հովվես և բրուտի անօթների պես պիտի փշրես»:

Թագավորն ասաց.

- Եթե դու չես վախենում, որ աստվածները քեզ կմեռցնեն, ոկրեմն ես քեզ շղթաներով կապել կտամ, ապա կհրամայեմ սպանել:

Սուլը պատասխանեց.

- Ես ամեն ժամանակ պատրաստ եմ մեռնելու իմ անմահ Տիրոջ համար, Որն ինձ անմահություն պիտի տա: Իսկ քո աստվածները ինձ չեն կարող ոչ մի բան անել:

Այս ասելով սուլը Սարգիսը խոնարհեցրեց գլուխը և շղթաները գցելով ատյանի առջև, կարծես ասելով. «Ահա ես իմ վիզը զնում եմ սրի տակ»:

Այն ժամանակ թագավորը դահիճներին նշան արեց՝ որ նրան զգուշորեն բռնեն ու բանտ տանեն: Եվ զինորները վախով մոտեցան ու շղթաները նրա պարանոցին անցկացրին:

Դահապետը նախապես հրաման էր ստացել

Սարգսին բանտի մեջ պահելու ու բազմաթիվ չարչարանքներով տանջելու: Իսկ երանելին գոհություն էր տալիս Աստծուն՝ որ իրեն արժանի է անում իր անվան համար չարչարանքներ ու շղթաներ կրելու, նաև իր որդու համար՝ որ երանելի վկայի արյունով պսակվեց Քրիստոսից:

Դահապետը Սարգսի վրա վախ ազդելու համար, ասաց, որ մի քանի օրից պետք է մեռնի: Հրովարտակները հարապարակներում արդեն ազդարել են, թե եկե՛ք ու տեսեք մահապարտին:

Իսկ սուլը լսելով հրամանի մասին, սկսեց աղոթել ու ասել.

- Աստված Աբրահամի, իսահակի և Հակոբի, Աստված սուլը առաքյալների և մարդարեների, հիշեր և ինձ Քո ծառային, և մի՛ մոռացիր ինձ, ինչպես որ մինչ հիմա չես մոռացել: Դու ես Հայր Աստվածը մեր Տեր Հիսուս Քրիստոսի. արժանի արա ինձ, Քո ծառային՝ քեզանից այս նահատակության պսակը ընդունելու: Տեր Հիսուս Քրիստոս, միախառնիր ինձ էլ Քո սուլը բերի զորագնդին՝ որոնք Քո սիրո համար նահատակվեցին: Եվ Դու, ով կենդանարար Սուլը Հոգի, մտցրու ինձ անվախճան կյանքի նավահանգիստը, ուր փառավորվում է սուլը Երրորդությունդ:

Եվ մինչ բանտի մեջ աղոթում էր, բանսարկու

սատանան եկավ, նրա առջև կանգնելով, ասաց.

- Սարգիս, ի՞նչ եմ արել քեզ: Ինչո՞ւ իմ հանգստավայրս փշրեցիր, ինչո՞ւ իմ զոհասեղանս ավերեցիր: Հիմա զղջա և հանդարտեցրու թագավորի սիրտը:

Սուրբ Սարգիսը սաստեց նրան և ասաց.

- Զքվի՛ր առջեիցս, սատանա և քո կորսվելիք-ներովդ հանդերձ, գնա՛ հավիտենական դժոխք: Եվ դեմ ասաց.

- Քանի որ դու ինձ արհամարհեցիր, ես էլ պիտի մտնեմ բռնավորի սիրտը, և մարմինդ ուտել, արյունդ խմել և ոսկորներդ փշրել պիտի տամ, ինչպես որ դու արեցիր իմ բագիներիս:

Եվ ասաց նրան սուրբ Սարգիսը.

- Քրիստոսի անունով հեռացի՛ր ինձանից:

Եվ սատանան գնաց, մտավ բռնավորի սիրտը: Եվ նա հրաման տվեց, որ հաջորդ օրը նրան չարչարեն:

Եվ դահիճները տանջում, քերթում և քաշկոտում էին սուրբ Սարգիսին, իսկ նա սաղմոսելով երգում էր գոհությամբ.

- Աստված, ինձ օգնության հասիր, Տե՛ր ինձ զորավիդ եղիր: Աստված և Հայր մեր Տեր Հիսուս Քրիստոսի, զորություն տուր իմ հոգուն և համբերություն իմ մարմնիս՝ որ հաղթեմ սատանային և

նրա մեքենայությունները չհաղթեն ինձ:

Երանելու չարչարանքները շարունակվեցին ամբողջ օրը, ու երբ գիշեր եղավ, Աստծո հրեշտակը եկավ նրա մոտ ու ասաց.

- Զորացիր Սարգիս, քանզի ես քեզ հետ եմ: Ինչ որ խնդրեցիր, տվեցի քեզ և ինչ որ խնդրես՝ պիտի տամ քեզ: Երբ Աստծո հրեշտակն այս ասաց, սուրբի սիրտ զորացավ և նրա մարմինը կարծր երկաթի պես դարձավ և արհամարհեց նրանց տանջանքները, կապանքները ու գոհությամբ փառավորում էր Աստծուն:

Եվ երբ բանսարկուն երկրորդ անգամ լրբորեն երևաց նրան, սուրբն ասաց.

- Ես Քրիստոսին հագա իմ սրտի մեջ իբրև հանդերձ, եթե նետերդ արձակես իմ վրա նրանք չեն կարող վնասել ինձ՝ իմ Տիրոջ նահատակին, որովհետև Քրիստոսն ինձ որպես ծառ տնկեց: Իմ սատերը կարող ես փշրել, բայց արմատներս չես կարող վնասել: Փոս փորեցիր, բայց չկարողացար գանձերիս տիրել, քանզի Աստված ինձ հետ է և նրա հրեշտակը ինձ զորացրեց:

Իսկ բանսարկուն սկսեց հիշեցնել սուրբին իր կարծեցյալ զորությունները:

Իշխանություն ունեմ, ասաց, բռնավորի սիրտը մեղմելու, ու մարմինդ կազատվի տանջանքներից:

ԱՇ թշվառական, զոհ մատուցիր ու պաշտիր ինձ, եթե ո՛չ, քեզ ցույց կտամ իմ զորության ուժը: Հիշե՛ր, թե ինչ արեցի քո հորը՝ Աղամին, ինչպես նրան կենաց դրախտից հանեցի ու փառքից զրկեցի: Գիտես թե ի՞նչ արեցի Հորին, և թե ինչպես կոտորել տվեցի մարգարեներին: Նույնպես ես էի, որ առաջալներին ու մարտիրոսներին չարչարել ու սպանել տվեցի: Ես էի, որ հրեաների սիրալ մտա և մոլորեցրի նրանց, որ չարչարեն ու հաչի վրա սպանեն Կույսից ծնվածին:

**Սուրբ Սարգիսը պատասխանեց.**

- Արդ բավական է, սատանա՛, մի ձանձրացրու ինձ: Գիտեմ որ քո չարիքները քո գլխին վերադառն, իսկ սրբերը պատկեցին փառքով ու արքայությունը ժառանգեցին: Գիտեմ որ հրեաներին մոլորեցրիր, բայց այն էլ գիտեմ, որ Կույսից ծնվածը, որ հավիտենից առաջ Հոր մոտ էր ջախջախեց քո գլուխը և Աղամին փրկեց դժոխքից: Ո՞վ սատանա, խուլ, կույր ու հիմար, ինչպե՞ս չիմացար այս ամենը: Դու չէիր կարող Աստծո Որդուն խաչը հանել, եթե ինքը չուզենար, քանզի ինքն է ամենակարող փառքի Տերը, Հոր և Սուրբ Հոգու հետ: Քանզի Հայրը ինքնազո՞ւ է. Որդին՝ Հորից է, և Սուրբ Հոգին նրա էությունից: Երեք անձեր, մեկ Աստվածություն, մեկ զորություն: Արդ, ո՞վ կհա-

մարձակվեր Աստծո Որդուն հաչը հանել, եթե ինքն այդ չուզենար: Բայց արդ կամավորաբար իր աղամական մարմինը չարչարանքների մատնեց: Եկավ Հոգու զորությամբ և բազմաթիվ հրեշտակներով՝ խորտակեց պղնձյա դռները ու փշրեց երկաթյա նիգերը: Նրա զորության դեմ անդամ աղամանդյա դռները չեն կարող դիմանա. և փրկեց մեր հոր Աղամին և բոլոր նրանից ծնվածներին, որ արդարների դասին են պատկանում: Ու Աղամը փառավորեց Հորը Որդուն և Սուրբ Հոգուն:

**Իսկ սատանան ասաց.**

- Մար Սարգիս, կարծում էի, որ ի վերջո պիտի ետ դառնաս ու ինձ պաշտես, բայց ահա ինձ մեծ արգելք հանդիսացար: Բայց ի՞նչ շահեցիր քո համառությունից: Արի՛, հավանություն տուր թագավորի կամքին և աշխարհի վրա անուն վաստակիր և սնոտի բաների համար կյանքդ մի զոհիր: Զակառակ պարագայում՝ վաղը վրադ դարձյալ հսկայական ամբոխ կուղարկեմ և մարմինդ երկրի գազաններին ու երկնքի թռչուներին պիտի տամ:

**Սուրբ Սարգիսն ասաց նրան.**

- Քրիստոսի անունով հեռացի՛ր ինձանից, ով դո՛ւ տկար, անարգված և ժպիրհ: Հեռացիր ինձանից, և էլ մի համարձակվիր մոտենալ ինձ, ճշմարտության հակառակորդ ու ստության հայր: Որով-

Հետեւ քո խրատին հետեղների համար ոչ թե կյանքի, այլ հավիտենական մահվան պատճառ է:

Ու հեռացավ նրանից չարը, հալածված ու խիստ ամոթահար:

Դրանից հետո, հինգերորդ օրը լուսանալու պես, սուրբ Սարգիսն աղոթեց ու ասաց.

- Տեր Հիսուս Քրիստոս, որ անօդնականներին օգնական ես և մոտ ես քեզանից երկյուղածներին, եկ, օգնիր ինձ, Տերս ու Փրկիչս, տկարներին զորացնող, նեղվողներին խաղաղեցնող, սպարապետ պատերազմի, մրրկահողմի դեմ ամրություն, կարոտ եղողների օգնական: Եկ, օգնի՛ր ինձ, Տեր Հիսուս Քրիստոս՝ Փրկիչ իմ սիրելի:

Եվ հանկարծակի բանտի մեջ երևաց նրան Տեր Հիսուսը՝ երկնային զորքերով ու նզդ տեղը լցվեց արեկի լույսից ավելի պայծառ լույսով և իսկույն արձակվեցին երանելու ձեռքերի ու ոտքերի կապանքները: Եվ լույսի միջից ձայն լսվեց, որ ասում էր.

- Քաջալերվի՛ր իմ բարի և հավատարիմ ծառա Սարգիս, սիրոտ թող չվախենա նրանցից, որ կարող են միայն մահկանացու մարմինդ սպանել, որովհետեւ այս աշխարհի հողանյութ հարկերից հետո պիտի մտնես քո Տիրոջ լուսեղեն խորանների անվախճան ուրախության մեջ:

Լուսեղեն փառքի այս փայլատակումը տեսնե-

լով, բանտի շուրջ եղողները հավաքվեցին այն տեղում, ուր բանտարկված էր երանելին և տեսան նրան կապանքներից արձակված ու Աստծուն աղոթելիս: Եվ զարմացած փառք էին տալիս ճշմարիտ Աստծուն, ում մասին քարոզում էր Սարգիսը:

Անմիջապես գնացին ու պատմեցին թագավորին կատարված հրաշքի մասին: Այն ժամանակ թագավորը հրամայեց, որ երանելուն իր առջեր բերեն:

Բերելով իրեն, Շապուհն ասաց.

- Ո՞վ անմիտ ու քո անձի թշնամի, ի՞նչ շահ ունեցավ մեր հրամաններին հակառակվելը, եթե ոչ անարգանք և չարչարանք, նաև քո որդու մահը: Եվ եթե շարունակես համառել, չարաչար մահվամբ պիտի բաժանվես այս աշխարհից: Իսկ եթե հրաժարվես քո անմիտ խորհուրդներից և ուղղվելով՝ հիշելով մեր նախկին սերը, կներեմ ու քո արարքները մեղք չեմ համարի, որոնցով հանցավոր եղար մեր հանդեպ: Ընդհակառակը, գերագույն փառքի պիտի արժանանաս: Արդ, լսի՛ր մեր հրամանները և դրանից հետո գնա նազովրեցու ետելից:

Թագավորն այս ասաց, որովհետեւ չեր ցանկանում սուրբի մահը. մանավանդ որ Հուլիանոս կայսրի գալու լուրն արդեն հասել էր իրենց:

Եվ երանելին պատասխանեց.

- Ձեր աստվածների նախատինքն ու ամոթը չզգացիր, որովհետև դու էլ աստվածներիդ նման խավար ես ու անլույս: Նրանց փոշու պես մանրացված տեսնելով, ինչպե՞ս չհասկացար դրանց անկորողությունը: Բայց իմ պարծանքն ու հույսս՝ իմ Աստված Հիսուս Քրիստոսն է: Որովհետև ինչպես որ նա իմ որդուն իր մոտ առավ բարեպաշտ հավատքով, նույնպես և ինձ պետք է ընդունի նույն հավատքի մեջ հաստատված ու արմատացած: Նրան գոհություն պիտի հայտնեմ ու փառավորեմ, որովհետև երանքիս պտուղը ընդունեց և թույլ չտվեց, որ խարթի քո մոլորությունից: Եվ արդ, հաստատապես ասում եմ քեզ, որ քո կուրությունը ինձ չի կարող խավարեցնել: Բայց թող հայտնի լինի քեզ, որ եթե նույնիսկ ինայես իմ կյանքը, քո մահը ինձանից պետք լինի, որովհետև չեմ ների քո պիտի բերանը՝ որ հայշոյում է իմ ճշմարիտ Աստծուն:

Երբ թագավորը այս լսեց, շատ վախեցավ: Ու հրամայեց, որ հանեն նրա զինվորական հագուստները և ասաց.

- Զորավար Սարգիսը, որ չգնահատեց իրեն տրված պատիվը, անարդանքի պիտի մատնվի և իր կատարծ մեղքի պատճառով պիտի մեռնի:

- 45 -

Եվ հրամայեց, որ քաղաքից դուրս հանելով սպանեն նրան:

Դահիճները նրան առնելով, բռնությամբ տարան մինչև մահվան վայրը: Նրա հետ էին գնում և նաև մեծ բազմությամբ հեթանոսներ:

Կռապաշտները, որոնք նրա դեմ ոխ ունեին բագիները կործանելու համար, քաշկրտում ու չարաչար տանջում էին և եղունգներով նրա մարմինը քերթում:

Իսկ երանելին արհամարհելով տանջանքները, ստեղծատեալ աղոթք էր անում.

- Հայր մեր որ երկնքում ես ու երկրի վրա, մի՛ մատնիր մեզ փորձության, այլ ազատիր չարից:

Ամբողջ ճանապարհի ընթացքում այս աղոթքն էր անում, հիշելով Աստծո զորությունն ու Նրա Աջը, որով փրկեց արդարներին և աստվածապաշտներին, երևելի ու աներևույթ թշնամիների ամեն տեսակ փորձություններից և վտանգներից, ու զորացրեց առաքյալներին և վկաներին ճշմարտությունը քարոզելու ժամանակ: Նույն զորությունն էր խնդրում Հզորից և իր անձի համար:

- Մի՛ հեռանա քո ծառայից, ով Տեր Հիսուս Քրիստոս, Ամենակալ, սուրբ քաղցր, բարերար, որ մերձ ես քեզանից վախեցողներին և հայտնվում ես Քեզ փնտրողներին:

- 46 -

Երբ հասան այն վայրը, որ կոչվում է Սալեր,  
սուրբը կանգ առավ: Որովհետև այնտեղ պետք է  
կատարվեր իր վախճանը:

Եվ ձեռքերը վեր տարածելով՝ բարձր ձայնով  
ասաց.

- Տեր Աստված, որ արժանես անում ինձ մեռնե-  
լու Քո սուրբ Անվան համար, լսիր Քո ծառայի  
աղաչանքը: Ընդունիր նաև ինձ նրանց հետ, որոնք  
սիրեցին Քո գալստյանդ օրը և Քեզ մասնակից  
եղան Խաչի և մահվան չարչարանքներով: Եվ եթե  
չարից խարեւելով մեղք եմ գործել մանկությունիցս  
մինչ հիմա, կամա թե ակամա, գիտությամբ թե ան-  
գիտությամբ, լվա՛, մաքրիր ինձ ողորմությամբ՝  
իմ արյան հեղումամբ: Իսկ Քեզ հավատացողնե-  
րին, որոնք կհիշեն ինձ, առ Քեզ իմ  
բարեխոսությամբ խնդրում եմ մեղքերի թողու-  
թյուն տուր և յուրաքանչյուրին հոգեւոր ու մարմ-  
նավոր վտանգներից փրկություն և ախտերի բու-  
ժում: Դւերի հալածանքներից ազատագրում ու  
հիվանդություններից բժշկություն: Պատերազմնե-  
րի մեջ հաղթություն, բանտից ու կապանքներից  
արձակում: Զար ծառայությունից՝ ազատություն,  
խոռվություններից՝ խաղաղություն: Նեղություն-  
ներից՝ անդորրություն, ճանապարհորդներին  
պաշտպանություն:

- 47 -

Հանդարտություն: Երաշտի ժամանակ՝ անձրևների  
լիություն ու առատ պտղաբերություն: Կարկտա-  
բեր ու ցրտաբեր օդի սաստկության դադարում,  
մորեխների և զեռուների՝ որոնք Քո բարկության  
պատճառով մարդկանց վրա որպես պատուհաս է  
գալիս՝ հալածում: Եվ նրանք, որ նվիրական ընծա-  
ներով մեր հիշատակը կկատարեն, թող ընդունվի  
որպես անուշ հոտ: Եվ Քիրկն ընդունիր և վար-  
ձատրիր բյուրապատիկ բարություններով՝ այստեղ  
և հանդերձյալում: Եվ ընդունի՛ր իմ հոգին արդար-  
ների օթևանում՝ հավիտենական հանգստի համար  
և Քեզ փառք հավիտյանս հավիտենից. ամեն:

Աղոթքն ավարտելուց հետո, հանկարծ երկնքից  
մի հրեշտակ իջավ սրբի մոտ, ձեռքում բռնած լու-  
սապայծառ պսակը և ասաց.

- Քրիստոսի քաջ նահատակ, զորացի՛ր, մի՛ վա-  
խեցիր նրանցից՝ որ մարմինդ են սպանում, որով-  
հետև քեզ համար բացվեց երկնքի արքայության  
դուռը: Եվ ինչ որ խնդրեցիր Աստծուց, շնորհվեց  
քեզ: Եվ հավատացյալների կատարած խնդրանք-  
ները պիտի կատարվեն Աստծո կողմից:

Բազմությունը տեսնեով հրեշտակին և  
ձեռքի մեջ լուսեղեն պսակը, հիացած աղաղակում  
էին ասելով.

- Մեծ է քրիստոնյաների Աստվածը և նրանից

- 48 -

**զատ ուրիշ Աստված չկա:**

Իսկ սուրբը դառնալով հավատացյալ զորքերի  
կողմն՝ ասաց.

- Այժմ ինձ լսեք, ո՞վ Քրիստոսին հավատացող-  
ներ, որ մոտ լինելով ականատեսը պետք է լինեք  
իմ նահատակությանս, չլինի թե, որ մարմնիս մեռ-  
նելը տեսնելով՝ տիսրեք, քանզի այսօր, կամ վաղը  
այս մարմինը նախահոր պարտքը պիտի վճարի,  
բայց Քրիստոսի հանդեպ ունեցածս հույսս ան-  
փախճան է, որով Նրա գալստյան ժամանակ դարձ-  
յալ պիտի ունենամ այն՝ անմահ ու անապական։  
Եվ ես ցնծում և ուրախ եմ, որ մանկությունիցս ի  
վեր ունեցածս փափազը, Տերը կատարեց, իր չար-  
չարանքներին ու նահատակների պսակին հաղոր-  
դակից դարձնելով։ Եվ ինչպես որ Տերն ինձ զո-  
րացրեց մարմնավոր թշնամիների դեմ մղած պա-  
տերազմների մեջ, այսօր նույնպես կզօրացնի հո-  
գիների թշնամու դեմ։ Եվ ես կյանքիս ընթացքը  
կատարելով և հավատքը հաստատուն պահելով,  
ուրախությամբ Քրիստոսին կվերադառնամ։ Եվ  
Աստծո խաղաղությունը միշտ ձեզ հետ թող լինի։

Այս ասելով՝ ծնկելով դեպի արևելք, խաչակն-  
քեց և պարանոցը խոնարհեցնելով դահճի սրի  
առաջ, ասաց.

- Տե՛ր Հիսուս, ընդունիր իմ հոգին։

Եվ դահճը սրով կտրեց երանելու գլուխը։

Եվ նույն ժամին երկնային լույս փայլատակեց և  
շրջապատեց երանելու մարմինը։ Եվ նույն լույսից  
բոց ժայթքելով՝ հեթանոսներից շատերին այրեց։  
Մնացածներն էլ փախուստի դիմեցին։

Այդ ժամանակ երկնքից ձայն լսվեց, որ ասում էր.

- Վայելչորեն կատարեցիր ճգնությունդ, ո՞վ  
սուրբ Սարգիս, ուրեմն եկ ու բոլոր սրբերի հետ  
ժառանգիր հավիտենական հանդիսատը։

Եվ հավատացյալ զինվորները, վերցնելով երա-  
նելու մարմինը, պատեցին մաքուր հանդերձներով։

Այս կատարվածը թագավորի ականջը հասնե-  
լով՝ դահճներ ուղարկեց և նրանցից տասնչորս  
հոգի սպանել տվեց, որոնք բոլորն էլ պարսից ազ-  
գից էին։ Եվ հրամայեց որ նրանց մարմիները գա-  
զաների առջև նետեն, սակայն գազաները չմոտե-  
ցան նրանց, ըստ Աստծո տնօրինության։

Ապա խորհուրդ արեցին և նա հրամայեց կրա-  
կով այրել սրբերի մարմիները, քանզի պարսիկնե-  
րից շատերը տեսնելով կատարված հրաշքները,  
հավատացին Քրիստոսին։

Եվ մինչ այս բաներն էր խորհում, ամբարիշտի  
ականջին լուրեր հասան՝ թե Հուլիանոսն է գալիս։  
Առժամանակ մոռանալով իր չար խորհուրդները  
սրբերի մասին, գնաց պատերազմելու նրա դեմ։

Գիշերը հավատացյալներից ոմանք գալով,  
վերցրին սուրբ Սարգսի և տասնչորս զինվորների  
մարմինները և տարան զգուշությամբ թաղեցին  
Սարգսի զավակի՝ սուրբ Մարտիրոսի մոտ:

Սուրբ Սարգիսը իր մահկանացուն կնքեց Քրիս-  
տոսի 361 թվականի սկզբին:

«Հայսմավուրքը» նրա տոնը դնելով հունվարի  
31-ին, հետեւյալն է գրում.

«Սուրբ Սարգիսը մահացավ Մազանդարան կոչ-  
ված վայրում, Դաղման քաղաքի մոտ: Հավատաց-  
յալները սուրբ Սարգսի մարմինը առնելով, տարան  
Համիսն քաղաքը: Ապա Մեսրոպ մեծ վարդապետը  
գալով՝ առավ սրբի մարմինը և բերեց Հայաստան  
և Ուշի գյուղում պատվով թաղեց: Ապա նույն տե-  
ղում հոչակավոր վանք շինեց, որ մինչև այսօր  
մնում է (այժմ դժբախտաբար այն կիսավեր ու խո-  
նարհված վիճակում է. - Հեղ.): Սրբի ատամներից  
մեկը վերցնելով, տարավ Վրաստան՝ Գագա կոչվող  
վայրը (այժմ Կոթի գյուղից յոթ կմ. արևելք), ամ-  
փոփելով մի խաչափայտի մեջ: Եվ Խաչը օծելով  
կանգնեցրեց Գագա բլրի գագաթին, որ մինչև այ-  
սօր կոչվում է. «Գագա սուրբ Սարգիս»: Եվ մեծա-  
մեծ Հրաշքներ էր կատարվում այնտեղ, գերվածնե-  
րի, բանտարկյալների և ցավագարների համար  
կատարված աղոթքներով»:

Նույնը հիշատակում է նաև Վարդան վարդա-  
պետը՝ իր պատմագրության մեջ: Այս վկայաբա-  
նությունը հորինողի կողմից գրված շարականի  
մեջ, ուր հայտարարվում է, թե սուրբ Սարգիսը  
նշանավոր է հրաշագործ վկաների մեջ, և անհա-  
պաղ օգնել է բոլոր նրանց՝ որ իր անունն են կան-  
չել և բարեխոսությունը խնդրել:

Նա հոչակավոր է ոչ միայն Հայոց, այլ բոլոր  
արևելյան եկեղեցիների մեջ: Նույնիսկ անհավատ  
պարսիկները նրան կոչում էին «Պարսկաստանի  
Անհաղթ վկա» և կատարող բոլոր խնդրանքների:

Հետզրություն. Ըստ Հայ Առաքելական տոնա-  
ցույցի, սուրբ Սարգսի տոնին նախորդում է սր-  
բրիգոր Լուսավորչի կողմից հաստատված Հնդօր-  
յա Առաջավորաց պահքը, որը ժողովուրդը թյու-  
րիմացաբար համարում է սր. Սարգսի պահք: Այդ  
օրերին մեր ժողովուրդը, մանավանդ երիտասարդ-  
ները, տոնի նախօրյակին աղի բլիթներ ուտելով  
աղոթում են, որ իրենց ապագա զույգին գտնեն:  
Դա ժողովրդական սնոտի ավանդությունից է գա-  
լիս, որը ճշմարիտ հավատքի հետ ոչ մի առնչու-  
թյուն չունի, քանի որ Աստված սիրում է բոլորին  
և կատարում է բարի խնդրվածքները, եթե այդ  
մասին աղոթքները կատարվում են հավատքով:



## ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԶՈՐԱՎԱՐԻ ՎԱՐՔԸ



Տիեզերահոչակ մեծ  
զորավար և Քրիստոսի  
վկա Սուրբ Գևորգը (որ  
թարգմանվում է երկ-  
րագործ) ծնվել է Յրդ-  
դարում, Կապաղովկի-  
այի Մաժակ քաղաքի  
մոտ (այժմ՝ Կեսարիա)  
և ապրել է Դիոկղետա-  
նոս և Մաքսիմիանոս  
կայսրերի օրոք:  
Մանկությունը անց-

կացրել է Պաղեստինում, որտեղ իր ծնողները  
բազմաթիվ կալվածքներ ունեին: Ընդգրվելով զին-  
վորական գործի մեջ, նա իր ցուցաբերած քաջու-  
թյան ու հավատարմության համար, դեռ երեսուն  
տարին չբոլորած արժանացավ հազարապետու-  
թյան աստիճանի պատվին:

Այդ ժամանակներում Դիոկղետիանոս չարաբա-  
րո կայսրը, իր տեղակալ Մազնետիոսի խորհրդով,  
դաժան հրովարտակ հանեց քրիստոնյաների դեմ,  
որի մեջ հստակ գրված էր, թե այն քրիստոնյանե-

րը, որոնք հանձն չեն առնի աստվածներին գոհեր  
մատուցել, չարաչար մահով կսպանվեն:

Հովսեփիոս Կեսարացին ակնարկելով այս հրո-  
վարտակի մասին, գրում է.

~ Երբ Նիկոմիդյայի մեջ հրովարտակ ելավ ընդ-  
դեմ քրիստոնյաների՝ Գևորգ զորավարը Աստվա-  
ծային նախանձով վառված, քաղաքի հրապարակի  
վրա կախված հրովարտակը պոկելով, պատռեց  
այն, մինչ երկու ինքնակալները քաղաքում ճեմում  
էին: Քաջ զորավարը, որ դրանից առաջ այնքան  
մեծ անուն էր հանել և փայլել իր սիրագործու-  
թյուններով, սպասում էր, որ այս համարձակու-  
թյան համար իրեն չարաչար տանջանքների կեն-  
թարկեն: Բայց նա ամենեին հոգս չարեց, այլ քա-  
ջալերում էր մյուս քրիստոնյաներին՝ ասելով.

~ Մի վախեցեք նրանցից, որոնք կարող են ձեր  
մարմինը սպանել, բայց ոչ հոգին: Հիշեցե՛ք Տերու-  
նական խոսքը, թև՝ «Ով որ ինձ ուրանա մարդկանց  
առջև, ես էլ նրան կուրանամ Աստծո առջև»:

Եվ արքունական հրովարտակը պատռելուց հե-  
տո, նա անձամբ ներկայացավ թագավորական ատ-  
յան ու ամբողջ ավագանու ներկայությամբ բարձ-  
րաձայն վկայեց ու ասաց.

~ Ահավասիկ ես քրիստոնյա եմ, ո՞վ թագավոր  
ու կանգնած եմ ձեր առջև: Ասացե՛ք, արդյոք ո՞ր

Հանցանքների համար եք ուզում կորսոյան մատնել արդար քրիստոնյաներին: Մի՞թե հանցանք է պաշտել կենդանի Աստծուն և Նրա հրամանով հնագանդվել մարմնավոր տերերին: Արդ, ո՞վ թափավոր և դուք նրա աթոռակիցներ, մի՛ մոլորվեք դերի պատրանքներից, քանզի այն սատվածները, որոնք երկինքն ու երկիրը չեն ստեղծել, պիտի կորսվեն: Իսկ մենք խոստովանում ենք ամենասուրբ երրորդությունը՝ Հայրը, Որդին ու Սուրբ Հոգին, որ համայնք ստեղծեց ու մեռնելուց հետո հույս ունենք հավիտենական կյանքին: Իսկ դուք հեթանոսներդ, միաստվածությունը բազմաստվածության եք վերածել՝ ամեն տեսակ առասպելներով մոլորվելով: Այդ ամենը սատանայի ձեռքի գործն է, որն իր հետևորդներին կորսոյան է տանում:

Մագնետիոսը՝ թագավորին փոխարինողը զարմացած նայեց զորավար Գևորգին և հարցրեց նրան.

- Ո՞վ ես դու և ի՞նչ է քո անունը, որ այդքան հանդգնաբար ես խոսում:

Պատասխանեց քաջ զորավարը.

- Իմ առաջին անունն է քրիստոնյա, բայց մարդկանց կողմից անվանվում եմ Գևորգ, որովհետեւ Աստված ուզում է, որ պտղաբերեմ իր այգում:

Դիոկետանիոս թագավորը, որ քաջ ճանաչում

էր առաքինի զորավորին՝ ասաց նրան.

- Գևորգ, մենք լսել ենք որ դու իմաստության և քաջության մեջ մեծ անուն ես հանել: Բայց նաև իմացիր, որ քո այս համարձակ խոսքերդ քեզ երբեք օգուտ չի բերի, այլ հակառակը՝ կորուստ: Ուստի, եթե կուզես էլ ավելի բարձրանալ և մեծ պատիվների արժանանալ, եկ և զոհեր մատուցիր մեր սատվածներին:

Պատասխանեց Գևորգը.

- Քո շռայլ խոստումներդ չեն կարող ինձ իմ բարեպաշտությունը խախտել: Երանի թե դու ճանաչեիր ճշմարիտ Աստծուն ու երկնքի անանց արքայությանը արժանանայիր, որովհետեւ այս քո ունեցած իշխանությունը ժամանակավոր է:

Այդ խոսքերի վրա խիստ բարկացած թագավորը հրամայեց, որ նրան հրապարակի վրա փայտից կախեն և գեղարդով աղիքները թափեն:

Երբ կատարեցին թագավորի հրամանը, արյունը ցայտեց սուրբի մարմնի շուրջը, բայց և գեղարդը փափուկ կապարի պես ծալվեց:

Դիոկետիանոսն այդ տեսնելով՝ հրամայեց, որ փայտից ցած իջեցնեն նրան և բանտ տանեն:

Մինչ բանտի մեջ էր, սատանայի խորհրդով թագավորը և իր խորհրդականները մի մեծ անիկ շինել տվեցին, ամեն կողմից սրերով պատված: Երբ

դրեցին նրան մեքենայի տակ ու պտտեցին վրան՝  
Գևորգի մարմինը սաստիկ խոշտանգվեց:

Թագավորը հրամայեց, որ այս չարչարանքների  
մեջ պահեն նրան, իսկ ընքը գնաց զոհեր  
մատուցելու իրենց կուռքերին:

Եվ ահա այդ պահին երկնքից սաստիկ որոտում  
եղավ ու մի ձայն լսվեց.

Քաջալերվի՛ր Գևորգ, որովհետև քո Փրկիչը  
քեզ պիտի զորացնի: Եվ Աստծո հրեշտակը իջնե-  
լով՝ ազատեց նրան տանջանքներից, իսկ այնտեղ  
եղողները տեսնելով այդ՝ սարսափած ասացին.

- Մե՛ծ է քրիստոնյաների Աստվածը:

Մինչ Դիոկղետանիոսն ու Մագնետիոսը տաճա-  
րի մեջ աստվածներին զոհեր էին մատուցում,  
սուրբ Գևորգը գտնելով նրանց, ասաց.

- Ահավասիկ ես այստեղ եմ, դո՛ւք որ ինձ  
անիվների տակ դրեցիք և մեռած էիք կարծում:  
Ահա իմացե՛ք, որ կենդանի է իմ Աստվածը, որ գի-  
տի իրեններին օգնության հասնել:

Թագավորն ասաց.

- Միթե՞ դու Գևորգն ես, թե՞ նրա երևութական  
ստվերը:

- Մագնետիոսն ասաց.

- Գևորգին է նման:

Սուրբն ասաց.

- Այո՛, ես եմ. Գևորգը՝ ծառան Հիսուս Քրիստոսի:  
Ե՛տ դարձեք ձեր մոլորությունից ու ճանաչեցեք  
միակ ճշմարիտ Աստծուն:

Մի քանի զորականներ՝ որոնք իրենց կողքին  
էին, տեսնելով սուրբ Գևորգին և լսելով նրա խոս-  
քերը, դարձի եկան և ասացին.

- Մե՛ծ է քրիստոնյաների Աստվածը: Նա՛ է մի-  
այն ճշմարիտ Աստված և նրանից զատ այլ  
Աստված չկա՛:

Թագավորն այս լսելով, հրամայեց որ այդ  
նորադարձ վկաներին տանեն և սպանեն: Երբ  
նրանք կառափնարան էին գնում, միաբերան  
ասում էին.

- Տե՛ր Հիսուս, ընդունիր մեր հոգիները Քեզ  
խոստովանողներիդ խմբի մեջ և արժանացրու երկ-  
նային արքայության պատկին:

Այսպես նահատակվեցին Տիրոջ այդ սրբերը:

Ալեքսանդրիս թագուհին լսելով սուրբ Գևորգի  
մասին, ինքը նույնպես հավատաց Քրիստոսին ու  
բոլորի մոտ խոստովանեց.

- Ես էլ եմ քրիստոնյա:

Թագավորը այս իմանալով՝ շատ զայրացավ և  
հրամայեց որ Գևորգին թաղեն կրի վառվող գուրի  
մեջ, երեք օր ու գիշեր, մինչև որ մարմինը սաստիկ  
տնքությունից խաչվի ու այրվի:

Կատարեցին հրամանը: Երբ երեք օր հետո մարդ ուղարկեցին, որ նրան հանեն գուրից ու դիւ- ակը գազաններին գցեն, նրան ողջ և առողջ գտան ու դուրս հանեցին կրի միջից: Ալեքսանդրիս թա- գուհին այս լսելով՝ առավել ևս ամրապնդվեց իր հավատքի մեջ, նմանապես իր միջոցով հավատքի եկած մյուս զորականները:

Արքան իր մոտ կանչեց Գևորգին և ասաց.

- Ասա՛ իմանամ, ո՞վ քեզ կենդանացրեց:

- Եթե լսեք, դարձյալ չեք հավատա: Բայց իմա- ցիր, տեր արքա, որ ինձ քո տանջանքներից պահո- ղը Հիսուս Քրիստոս Աստծո Որդին է: Իսկ դուք ի՞նչ ակնակալիք ունեք ձեր պիղծ կուռքերից, որոնց դատարկ տեղը պաշտամունք եք մատու- ցում և նրանց պաշտողներն էլ պիտի տանջվեն հա- վիտենական անշեց հրով:

Թագավորը հարվածեց սրբի բերանին, ապա կաշվե մտրակով ձաղկեց ամբողջ մարմինը:

Հետո Մագնետիոսի խորհրդով թագավորը կան- չել տվեց Հայտնի կախարդ Աթանասիոսին և պատրաստել տվեց երկու բաժակ դեղ. առաջինից խմելու դեպքում՝ միտքը պիտի փոխվեր ու թագա- վորին պիտի հնազանդվեր, իսկ երկրորդի դեպ- քում՝ պիտի մեռներ: Սուրբ Գևորգը երկուսն էլ խմեց և ոչ միտքը փոխվեց, ոչ էլ վնասվեց մահա-

դեղից: Այն ժամանակ կախարդը պայման դրեց, որ ինքը ևս քրիստոնյա կլինի, եթե վաղուց մեռած մե- կին հարություն տար Գևորգը: Նույն պայմանը դրեց և Մագնետիոսը: Այդ ժամանակ սուրբ Գևոր- գը աղոթքով հարություն տվեց մի մեռելի և Աթա- նասիոս կախարդը քրիստոնյա դարձավ: Իսկ թա- գավորը այդ լուրի տարածման առաջն առնելու համար, սակրով սպանել տվեց թե՛ կախարդին, և թե հարություն առածին, իսկ Գևորգին կրկին բանտարկել տվեց:

Այդ ժամանակ Մագնետիոսն ասաց թագավո- րին, որ քրիստոնյաները հաստատակամ մարդիկ են նրանց կարելի է շահել միայն շողոքորթելով:

Թագավորը դարձյալ իր մոտ կանչեց Գևորգին և ասաց նրան.

- Գևորգ, եթե իմ խոսքերին հնազանդվես և անմահ աստվածներին զոհեր մատուցես, մեծ անուն կվաստակես և պատիվներ կստանաս:

Սուրբ Գևորգն ասաց թագավորին.

- Լա՛վ, այս անգամ կլսեմ քո խոսքդ: Ո՞ւր են քո աստվածները, տա՛ր ինձ նրանց մոտ:

Հեթանոս ժողովուրդը երբ լսեց, որ Գևորգը աստվածներին զոհ մատուցելու է գնում, անպատ- մելի ուրախությամբ լցված աղաղակեց.

- Կեցցե՛ անմահ ինքնակալը, որ ամենախստա-

պարանոց անաստվածներին նվաճել գիտի:

Երբ կռատուն մտան, կայսրը տարավ Գևորգին կուռքերի մոտ, որպեսզի նա զոհեր մատուցի աստվածներին: Եվ սուրբ Գևորգն ասաց կուռքին.

- Այդ դու<sup>շ</sup> ես, որ ինձանից ուզում ես զոհ ընդունել, ինչպես Աստված:

Այս ասելով, սուրբ կուռքի վրա տեառնագրեց Խաչն նշանով: Դւը, որ բնակվում էր այդ կուռքի մեջ, սարսափած պատասխանեց.

- Ո՞չ. մենք աստվածներ չենք, Աստված մեկ է, որ երկինքն ու երկիրը ստեղծեց: Մենք ապստամբ Հրեշտակներ ենք՝ սատանաների վերածված, մարդկանց մոլորեցնող:

Եվ սուրբն ասաց.

- Քանի որ դուք աստվածեր չեք, ուրեմն ինչպե՞ս եք համարձակվում այստեղ մնալ՝ Աստծո ծառայի ներկայությամբ:

Ու դեերը մեծ վայնասունով և ողբով դուրս փախան տաճարից և կուռքերը դղրդյունով գետին ընկան ու փշուր-փշուր եղան:

Քուրմերը այս տեսնելով՝ հարձակվեցին սուրբ Գևորգի վրա և ասացին.

- Թագավոր, իսկույն վերացրու այս կախարդին մեր միջից, որ բոլորին մոլորեցրեց և մեր պաշտած աստվածները կործանեց:

- Դիոկղետիանոսն ասաց Գևորգին.

- Դու ինձ խոստացար մեր Ապաղիոն աստծուն զոհ մատուցել, բայց դրա փոխարեն նրան վշուր-փշուր արեցիր:

Աղեքսանդրիա թագուհին այս բոլոր կատարվածները տեսնելով, ասաց թագավորին.

- Ճշմարիտ է միմիայն Գևորգի Աստվածը, որ այսպիսի հրաշքներ է գործում:

Թագավորն այս խոսքերը լսելով, սաստիկ զայրանալով ասաց Գևորգին.

- Քանի որ դու ոչ միայն չուղղվեցիր, այլև թագուհուն ևս մոլորեցրիր, այդ պատճառով երկուսդէլ մահով պիտի մեռնեք:

Ու նրանց քաղաքից դուրս տարան՝ հրամանի կատարման վայրը: Ճանապարհին թագուհի Աղեքսանդրիան Աստծուն աղոթելով, իր մաքուր հոգին ավանդեց: Իսկ սուրբ Գևորգը զորականներից թուլտվություն առնելով՝ վերջին անգամ Աստծուն աղոթեց, որպեսզի հեթանոսները ճանաչեն ճշմարիտ Լույսը և Աստծուն դառնան: Ապա պարանոցը երկարելով ասաց զինվորներին.

- Կատարեցե՛ք ձեր թագավորի հրամանը. և իսկույն կտրեցին սրբի գլուխի:

Այս ամենը կատարվեց Քրիստոսի 303 թվականին:

Սուրբ Գևորգի մարմինը տարան Պաղեստին՝  
Դիսոսպոլիս քաղաքը կամ Ռամլե ավանը։ Այստեղ  
Ասորիների եկեղեցու մեջ նրա նշանարները ցու-  
ցադրվում էին մինչև 13-րդ դարը։

Այստեղ կա նաև սուրբ Գևորգին անունով մի  
Հայկական եկեղեցի։

Սրբի նահատակությունից մահից հետո բազ-  
մաթիվ հրաշքներ գործվեցին (ու մինչ այսօր էլ  
գործվում են) և բազմաթիվ եկեղեցիներ կառուց-  
վեցին նրա անունով։

Սուրբ Գևորգի մասին պատմվում է հետեւյալ  
ավանդությունը, թե մի վիշապի սպանելով ազա-  
տել մի կույսի, որին որպես կերակուր էին տվել  
վիշապին։ Այս ավանդությունը ծագում է առել  
Նկարիչներից, որոնք սուրբ Գևորգին պատկերել  
են որպես վիշապասպան։ Բայց եթե այս բանը  
հասկանանք սատանայի համար, որին բազմիցս  
ոտնակու է արել սուրբ Գևորգը, կարելի է այդ  
ճիշտ համարել։ Նույնպես և պատմության մեջ Դի-  
ոկետիանոսը ներկայացնում է անդունդի վիշ-  
ապին, ինչպես հիշված է շարականի մեջ։



**ԱՊՈԹՔ ՔՐԻՍՏՈՍԻ  
ՀԱՎԱՏԱՐԻՄ ՎԿԱՆԵՐԻ  
ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅԱՄՔ**

Սրբերին պսակադրող Քրիստոս,  
Դու, որ Հաղթության պսակ ես  
Հնորհում Քո սրբերին, լսի՛ր մեզ  
երկնքից՝ Քո սրբությունից՝ սուրբ  
Աստվածածնի բարեխոսությամբ  
և Համայն սրբերիդ աղաչանքով՝  
մանավանդ Հավատարիմ վկաներիդ՝  
սուրբ Սարգիս և սուրբ Գևորգ  
զորավարների։ Եվ օգնիր մենք էլ նրանց  
նման Հավատարմորեն վկայենք Քո սուրբ  
Աստվածությունը, որպեսզի գոհությամբ  
փառավորենք Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ,  
այժմ և Հավիտյաններում. ամեն։

